

ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի այցը
Արագածոտնի մարզ

ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար
Վահան Մարտիրոսյանը աշխատանքային այցով եղավ Արագածոտնի մարզում:
Մարզպետ Գաբրիել Գյոզալյանի հետ նախարարն այցելեց Թալինի
տարածաշրջանի Կարմրաշեն, Ոսկեթաս եւ Ջովասար համայնքներ:

Բարձր լեռնային այս գյուղերը մարզկենտրոնին կապող ճանապարհը
վերանորոգման խիստ կարիք ունի: ՀՀ նախագահի հանձնարարությամբ այն
ընդգրկվել է Համաշխարհային բանկի միջոցներով հիմնանորոգվող «Կենսական
նշանակության ճանապարհացանցի բարելավման» 2017թ. ծրագրում:
Կհիմնանորոգվի 12 կմ երկարությամբ ճանապարհը:

Կարմրաշեն գյուղի կենտրոնում հավաքված երեք գյուղերի բազմաթիվ
բնակիչների հետ հանդիպման ժամանակ խնդիրների մեջ առաջնահերթությունը
տրվեց հենց այս ճանապարհի վերանորոգմանը: Գյուղացիները հավաստիացան, որ
մինչեւ մարտի վերջ կսկսվեն նախագծային աշխատանքները: Ըստ ընթացակարգի՝
կանցկացվեն մրցույթները: Հուլիսին արդեն կտրվի շինարարության մեկնարկը, եւ
մինչեւ տարեվերջ համայնքները կունենան բարձրակարգ ասֆալտապատ
ճանապարհ: Բացի ասֆալտապատումից, ճանապարհի ամբողջ երկայնքով
կկառուցվի ջրահեռացման համակարգ, իսկ գյուղամիջյան հատվածներում՝ նաեւ
մայթեր: Հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո ճանապարհը
կկահավորվի ճանապարհային նշաններով եւ անվտանգության տարրերով:
Ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո լուծում կտրվի
նաեւ տրանսպորտի խնդիրն: